Սիրելի՛ Նառա,

Ես Մանեն եմ՝ 17 տարեկան: Նախ, ուզում եմ շնորհակալություն հայտնել նամակիդ համար: Երբևէ չեմ մտածել, որ կխոսեմ ադրբեջանցու հետ, բայց շատ ուրախ եմ ընձեռված հնարավորության համար, քանի որ հավատացած եմ, որ այս խնդիրը լուծելու միակ ճանապարհը խոսելն է ու միմյանց հասկանալ փորձելը: Սա նաև կարող է մեր հրաշալի ընկերության սկիզբը դառնալ: Ինձ դուր են գալիս քո գաղափարները խաղաղության վերաբերյալ, և ես հավատում եմ, որ վաղ թե ուշ միլիոնավոր մարդիկ կհամախմբվեն միևնույն գաղափարի շուրջ՝ հասկանալով, որ դրանից ավելի կարևոր բան գոյություն չունի:

Ճիշտ քեզ նման ես միշտ երազել եմ, որ մեր երկրների միջև խաղաղություն լինի, քանի որ կար ժամանակ, երբ մենք ապրում էինք միասին, կողք–կողքի: Երբ երեխա էի, ես կարծում էի, որ եթե երկրները հարևաններ են, ապա նրանց միջև հարաբերությունները պետք է շատ խաղաղ և ամուր լինեն: Այդ էր պատճառը, որ ատելությունը մեր երկրների միջև միշտ զարմացրել է ինձ: Միշտ հարցրել եմ ինքս ինձ՝ ինչու՞ չենք կարող, պարզապես, դադարեցնել միմյանց սպանելն ու ուղղակի ապրել խաղաղ:

Երբևէ մտածե՞լ ես, թե ինչպիսին կլինեին մեր երկրները, եթե թշնամիներ չլինեինք, եթե չլիներ պատերազմ և բոլոր այդ մարդիկ չսպանվեին: Ես վստահ եմ, որ մեր երկրները շատ ավելի լավ վիճակում կլինեին, քան ներկայումս են, որովհետև պատերազմը երբեք ոչ մի լավ բանի չի հանգեցնում: Ես, նույնպես, չեմ ցանկանում հիշել անցյալը: Այն, իհարկե, մոռանալ հնարավոր չէ, սակայն կարծում եմ, որ մենք երբեք չենք կարողանա մտածել ապագայի մասին, եթե միշտ անցյալի մասին մտածենք:

Այո՛, մենք բոլորս ունենք մեր անձնական պատմություններն ու դառը հիշողությունները, մենք բոլորս սիրելի մարդիկ ենք կորցրել, մենք բոլորս սգացել ենք: Կարծում եմ՝ երկուսիս համար էլ եղել են պահեր, երբ լի ենք եղել ատելությամբ միմյանց հանդեպ՝ կարծելով, որ միակ ճանապարհը վրեժխնդրությունն է: Բայց դա այդպես չէ: Իսկապես այդպես չէ: Մեր ժողովուրդներից ոչ մեկը՝ ո՛չ մերոնք, ո՛չ ձերոնք, չեն ցանկանում, որ սա շարունակվի, նույնիսկ այն մարդիկ, որոնք ասում են, թե երբեք չեն համաձայնի ապրել խաղաղ, երբեք չեն մոռանա անցյալն ու չեն ների: Բայց խոսքը ներելու մասին չէ, ոչ էլ՝ անցյալն անտեսելու, այլ՝ հասկանալու, որ այն, ինչ եղել է, փոխել հնարավոր չէ: Մենք երբեք չենք կարող փոխել անցյալը, բայց ինչպես դու ես ասում, ապագան կերտելը մեր ձեռքերում է: Մենք կարող ենք միավորվել և անել ամեն բան, որպեսզի մեր ապագան միանգամայն տարբեր լինի անցյալից, լեցուն լինի սիրով և ուրախությամբ: Մենք կարող ենք անել դա միասին: Միասին մենք կարող ենք փոփոխություն բերել:

Անկեղծորեն՝

Մանե

Հ.Գ. Նամակին կցում եմ իմ էլ. փոստի հասցեն՝ հույսով, որ կգրես ինձ: